

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
2016-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2016-2025 թվականների պետական ծրագիրը» (այսուհետ՝ Ծրագիր)՝ համաձայն հավելվածի:

Հոդված 2. Սահմանել, որ՝

1. Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2016-2025 թվականների պետական ծրագիրն արտացոլվում է պետական միջնաժամկետ ծախսային ծրագրերում և պետական բյուջեում՝ ծրագրային դասակարգմամբ:
2. Հայաստանի Հանրապետության կառավարությունը պետական բյուջեի կազմում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով է ներկայացնում Ծրագրի տարեկան միջոցառումների պլանը:
3. Կրթության առաջանցիկ զարգացման նախադրյալներն ապահովելու նպատակով, կրթության ոլորտին ուղղվող ծախսերը պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության հեռանկարային զարգացման ծրագրերով և միջնաժամկետ ծախսային ծրագրերով սահմանված չափաքանակներին:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող երեսուներորդ օրը:

Հավելված

«ՀՀ կրթության զարգացման 2016-2025թթ. պետական
ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՈՐԸ ՄԵՋ ՊԵՏՔ Է

(Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման
2016-2025 թվականների պետական ծրագիր)

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Ներկայումս Հայաստանը կանգնած է լուրջ մարտահրավերների առաջ: Կրթության ոլորտը կարևորվում է որպես երկրի կայուն առաջընթացի, մարդկային կապիտալի վերարտադրության ու զարգացման նախապայմաններից մեկը: Տարածաշրջանային և համաշխարհային գործընթացներին համապատասխան ազգային կրթական համակարգ զարգացնելը ներկայիս հրամայականն է: Ըստ այդմ այն պետք է բավարարի և՛ յուրաքանչյուրին, և՛ ողջ հասարակությանն ու պետությանը, որպես հավաքական ամբողջություն:
2. Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2016-2025թթ. պետական ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) մշակվել է՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը, Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագիրը, կրթության համակարգի վերջին տարիների ձեռքբերումներն ու մարտահրավերները, ինչպես նաև ՄԱԿ-ի «Փոխակերպենք մեր երկիրը. Մինչև 2030 թվականը կայուն զարգացման օրակարգը» և «Կրթություն 2030. Դեպի ներառական և արդարացի որակյալ կրթություն ու կրթություն ողջ կյանքի ընթացքում բոլորի համար» ինչհոնի հռչակագիրը: Ծրագրի մշակման շրջանակներում իրականացվել է համակողմանի հետազոտություն՝ ուղղված ՀՀ կրթական համակարգում առկա հիմնախնդիրների և դրանց լուծման մեխանիզմների բացահայտմանը՝ հետևյալ հինգ ուղղություններով. կրթության մատչելիություն, կրթության որակ, կրթության բովանդակություն, կրթության կառավարում, կրթության արդյունավետություն:
3. Առաջիկա տարիների կրթության զարգացման թիրախները, գերակայությունները և գործողությունների շրջանակը միտված են առկա խնդիրների լուծմանը՝ ուշադրությունն առավելապես կենտրոնացնելով կրթության առաքելության, հայրենասիրական դաստիարակության, որակյալ բովանդակության, յուրաքանչյուր քաղաքացու ինքնաիրացման հնարավորությունների ապահովման, պետության առջև կանգնած մարտահրավերներին:

II. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԱԿԱՆԸ

4. Կրթությունը մարդու հիմնարար իրավունք է: Պետությունը պետք է ապահովի համընդհանուր հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթություն: Հասարակությունը կիսում է կրթության քաղաքականության մշակման և իրականացման պատասխանատվությունը, որը ենթադրում է ներառական հանրային գործընթաց: Քաղաքացիական հասարակությունը, ուսուցիչներն ու դասախոսները, մասնավոր հատվածը, համայնքը, ընտանիքը, երիտասարդներն ու երեխաները կարևոր դեր ունեն որակյալ կրթության իրավունքի իրացման գործում: Պետության դերը վճռորոշ է կարգավորող սկզբունքների և նորմերի սահմանման համար:
5. Կրթությունը հանրային արժեք է: Այն պետք է նպատակաուղղված լինի տվյալ քաղաքակրթական տեսակի լինելիության ապահովմանը, ձևավորի ազատ և պատասխանատու քաղաքացի: Կրթության միջոցով տեղի է ունենում մարդու անձնային և մասնագիտական լիարժեք զարգացումը, ազգային և համամարդկային արժեքների վրա խարսխված աշխարհընկալման ձևավորումը: Կրթությունը սերունդների հոգևոր-մշակութային ժառանգության, քաղաքակրթական արժեքների պահպանման և փոխանցման, ինչպես նաև նոր արժեքների ստեղծման պատասխանատվություն դաստիարակող հիմնական համակարգն է:
6. **Կրթության զարգացման գլխավոր նպատակն է** ապագային միտված կրթական այնպիսի համակարգի ձևավորումը, որը.
 - 1) լիարժեք ծառայում է ազգային շահերին,
 - 2) արտահայտում է կրթության համապատասխանությունը տնտեսության և հասարակության զարգացման ապագա ակնկալիքներին,
 - 3) յուրաքանչյուր քաղաքացու հնարավորություն է տալիս կյանքի բոլոր փուլերում ստանալ իր պահանջմունքներին համապատասխան որակյալ կրթություն:

III. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

7. Կրթության զարգացման գլխավոր նպատակի իրականացման համար կորդեգրվեն հետևյալ ռազմավարական մոտեցումները.

1) **կարիքներից բխող պլանավորում** – կբազմազանեցվեն ուսումնական ծրագրերը, կրթության կազմակերպման ձևերն ու մեթոդները, կրթություն ստանալու հնարավոր ճանապարհները,

ա. կապահովվի կրթական ծրագրերի ճկունությունը՝ դրանք սովորողների, նրանց ընտանիքների, համայնքի և տնտեսության կարիքներին համապատասխանեցնելու հնարավորությունները, կընդլայնվեն դպրոցական պարտադիր բաղադրիչով երաշխավորված դասընթացները, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար անհատական ուսուցման պլանների, մոդուլային ծրագրերի, հոսքային ուսուցման կիրառումը,

բ. միաժամանակ կզարգանան կրթության կազմակերպման ձևերը. կընդլայնվեն հեռավար կրթության հնարավորությունները, կներդրվի ոչ ֆորմալ կրթության արդյունքների ճանաչման մեխանիզմ, կապեր կստեղծվեն կրթության ֆորմալ և ոչ ֆորմալ ձևերի միջև, ինչը հնարավորություն կտա կրթական ցանկալի վերջնարդյունքներին հասնելու համար ընտրել առավել հարմար, սեփական հնարավորություններին համապատասխանող ճանապարհ: Կներդրվեն ուսումնական պարապմունքների կազմակերպման ժամանակակից մեթոդներ՝ հնարավորություն ստեղծելով օգտագործել արտադպրոցական հաստատությունները՝ որպես մշակութային կենտրոններ և այլն,

գ. կրթության համակարգի բազմազանեցումը կառնչվի նաև ուսումնական հաստատությունների կազմակերպահրավական ձևերին: Արդեն իսկ որոշ ուսումնական հաստատություններ վերակազմակերպվել են հիմնադրամների: Կխթանվի ուսումնական հաստատությունների համատեղ հիմնադրման, կառավարման համակարգում սոցիալական գործընկերների մասնակցության հնարավորությունների ընդլայնումը: Կխրախուսվի ցանցային կրթական համակարգերի ներդրումը և համագործակցային միջավայրի ձևավորումը,

2) **սոցիալական երկխոսություն**՝ կարիքներին արդյունավետ արձագանքելու նպատակով կամրապնդվեն հետադարձ կապի և սոցիալական երկխոսության մեխանիզմները. պարբերաբար կանցկացվեն հասարակական կարծիքի ուսումնասիրություններ, կստեղծվեն հանրային քննարկման հարթակներ, կբարելավվեն որոշումների կայացման մասնակցային մեխանիզմները,

3) **գործընկերային համագործակցություն**՝ մասնավոր հատվածի և քաղաքացիական հասարակության հետ կամրապնդվի գործընկերային համագործակցությունը: Որոշ գործառույթների իրականացումը, կրթաօժանդակ ծառայությունների մատուցումը կփոխանցվի մասնագիտական ոլորտում արհեստավարժ և հասարակության վստահությունը վայելող կազմակերպությունների: Պետական աջակցություն կցուցաբերվի կրթության զարգացման գերակայություններին և սկզբունքներին համապատասխանող միջազգային և տեղական կազմակերպությունների կողմից նախաձեռնված ծրագրերին, որոնք մասնագիտական փորձաքննության արդյունքներով կներառվեն կրթության զարգացման ծրագրերի փաթեթում:

IV. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

8. Կրթության զարգացման պետական քաղաքականության սկզբունքներն են.
- 1) Կրթական հաստատությունների ինքնավարության և ինքնաարժեքավորման համակարգի կիրառում:
 - 2) Ներառականություն՝ կրթության բնագավառի պետական քաղաքականության մշակումն ու իրականացումը պետք է ընդգրկի հասարակության բոլոր խավերը՝ ներառյալ խոցելի խմբերը: Յուրաքանչյուր քաղաքացու, շահագրգիռ հասարակական կազմակերպությանը պետք է հնարավորություն ընձեռնվի ներդրում ունենալու որոշումների կայացման, ծառայությունների մատուցման և արդյունքների գնահատման գործընթացներում: Նման հնարավորություն պետք է ընձեռնվի նաև սփյուռքի մեր հայրենակիցներին:
 - 3) Տարածքային համաչափ զարգացում՝ տարածքային համաչափ զարգացումը կայուն զարգացման կարևոր նախադրյալն է: Կրթության համակարգում հավասարության ապահովումը և տարածքային անհամաչափ զարգացման մեղմումը կրթության միջոցով պետք է լինեն իրականացվող քաղաքականության անկյունաքարային սկզբունքները:
 - 4) Ազգային և համամարդկային արժեքների համադրում՝ Հայաստանի կրթական համակարգը միջազգային կրթական համակարգի անբաժանելի մաս լինելով,

ակտիվորեն ներգրավված է եվրոպական և տարածաշրջանային կրթական ինտեգրացիոն ծրագրերում, և նպատակաուղղված է հայ քաղաքակրթական ժառանգության վրա հիմնված արժեհամակարգի ամրապնդմանը:

5) Թափանցիկություն և հաշվետվողականություն՝ առաջընթացի կարևոր նախապայման է բոլոր շահագրգիռ կողմերի արդյունավետ համագործակցությունը, ինչը կարող է ապահովվել միայն առավել թափանցիկ միջավայրում և բաց հաշվետվողականության պայմաններում:

V. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ, ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ

9. **Թիրախ 1.** Մինչև 2025 թվականը ապահովել, որպեսզի բոլոր երեխաները ստանան որակյալ միջնակարգ կամ նախնական մասնագիտական կրթություն՝ ինքնուրույն կյանքի լիարժեք պատրաստված լինելու, կրթության հաջորդ աստիճանում ուսումն արդյունավետ շարունակելու և արժանապատիվ աշխատանքային գործունեությանն անցնելու նպատակով:

10. Հանրակրթության և նախնական մասնագիտական կրթության ոլորտում հիմնական գերակայությունը որակի բարձրացումն է, որի նախապայմանն է ուսումնական հաստատությունների կողմից կրթական առաքելության գիտակցումը:

Կրթության որակը ներառում է բազմաթիվ բաղադրիչներ: Դրանցից առաջնահերթն ուսումնառության արդյունքներն են, որոնք պահանջված են սովորողների կողմից, և ապահովում են շրջանավարտների պատրաստվածությունը՝ ուսումը շարունակելու կրթության հաջորդ մակարդակում կամ անցնելու համապատասխան աշխատանքային գործունեության:

Կրթության որակի բարձրացման գործողությունների շրջանակն ընդգրկում է.

1) կրթական չափորոշիչների և ծրագրերի բարելավում, մասնավորապես՝
ա. պետական հանրակրթական ծրագրերի արդիականացում՝ դրանք համապատասխանեցնելով ժամանակի պահանջներին և միաջազգայնորեն ընդունված չափանիշներին, մասնավորապես կարևորելով մաթեմատիկայի,

բնական գիտությունների, ճարտարագիտության և տեղեկատվական տեխնոլոգիաների ուսուցումը,

բ. օժանդակություն նորարարական, այլընտրանքային, կրթության գերազանցության, փորձարարական և միջազգային հանրակրթական ծրագրերի մշակմանը, ներդրմանը և իրականացմանը,

գ. ավագ դպրոցում կրեդիտային (չափանիշային) համակարգի ներդնում,

դ. դպրոցներում մասնագիտական կողմնորոշման կենտրոնների ստեղծում:

2) հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավում, ապահով և անվտանգ միջավայրի ստեղծում, մասնավորապես՝

ա. դպրոցական շենքերի հիմնանորոգման և նոր շենքերի քաղաքաշինական նախագծերի մշակում՝ հաշվի առնելով կրթության նորացող մեթոդաբանությունը, անվտանգության և համընդհանուր մատչելիության չափանիշները,

բ. ըստ գնահատված կարիքների՝ շենքերի հիմնանորոգում, սեյսմակայունացում և նոր դպրոցական շենքերի ու շինությունների կառուցում,

գ. հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից ռեսուրսների և էներգիայի խնայողաբար օգտագործում, իրենց կարիքների համար էներգիայի վերականգնվող աղբյուրների օգտագործում, դպրոցական շենքերի էներգաարդյունավետության բարձրացում, բնապահպանական կայունության և էներգախնայողության մշակույթի տարածմանն ուղղված կրթական մոդելների մշակում և զարգացում,

դ. դպրոցների համալիր անվտանգության ապահովում, որը ներառում է ապահով և հարմարեցված միջավայր, աղետների ռիսկերի կառավարում և աղետների ռիսկերի մեղմացմանն ուղղված կրթություն,

ե. հանրակրթական ուսումնական հաստատություններին ուսումնական գույքի, ժամանակակից համակարգչային սարքավորումների շարունակական արդիականացում, համացանցի որակյալ հասանելիության ապահովում, ժամանակակից լաբորատորիաների և գրադարանների ստեղծում,

զ. հանրակրթական ուսումնական հաստատություններում երեխայակենտրոն միջավայրի ստեղծում՝ ներդնելով ուսումնաօժանդակ ծառայություններ, արտադասարանական խմբակներ, դպրոցական սնունդ, հաստատությունների գործունեության արդյունավետ աշխատակարգ:

3) բարձր որակավորում և պատրաստվածություն ունեցող մանկավարժական անձնակազմի ապահովում, որոնք տիրապետում և կիրառում են ժամանակակից դասավանդման մեթոդներ, մասնավորապես՝

ա. սահմանամերձ և հեռավոր գյուղական համայնքների դպրոցները մանկավարժական կադրերով համալրման արդյունավետ մեխանիզմների մշակում և ներդնում,

բ. մանկավարժական որակավորման պահանջների խստացում՝ նրանց աշխատանքային նկարագրերում միջազգային չափորոշիչների ներառում՝ այդ թվում ներառական կրթության սկզբունքներին դրանց համապատասխանեցում,

գ. մանկավարժական կրթության արդիականացում՝ ապահովելով մանկավարժական մասնագիտությունների ցանկի, որակավորման բնութագրերի, շրջանավարտների մասնագիտական գիտելիքների և կարողությունների համապատասխանությունը հանրակրթության ժամանակակից պահանջներին, ուսումնական պրակտիկայի արդյունավետ համակարգի ներդրում,

դ. բարձրագույն մանկավարժական կրթության կառուցվածքի բարելավում և հստակեցում: Մարզերում և մայրաքաղաքում գործող մանկավարժական բուհերի կրթական ծրագրերի համադրում և միասնական չափանիշների ապահովում,

ե. ուսուցիչների վերապատրաստման և մասնագիտական առաջխաղացման հնարավորությունների ընդլայնում, վերապատրաստումների արդյունավետության մոնիթորինգի և գնահատման մեխանիզմների մշակում ու ներդրում, Կրթության ազգային ինստիտուտի առաքելության, նպատակների և կառուցվածքի արմատական վերանայում,

զ. ուսուցիչների իրավական կարգավիճակի հստակեցում, աշխատանքի վարձատրության, խրախուսման նոր մեխանիզմների ներդրում՝ հատուկ ուշադրություն հատկացնելով սահմանամերձ և հեռավոր գյուղական համայնքների ուսուցիչներին,

է. մանկավարժներին մեթոդական աջակցության, նորարարական գիտելիքներով զինելու նպատակով մանկավարժական գիտական հետազոտությունների խթանում:

4) կրթական պաշարների և ուսումնական գրականության որակական բարելավում, մասնավորապես՝

ա. դասագրքերի որակի բարելավում, համապատասխանեցում առարկայական ծրագրերին և չափորոշիչներին, դրանց բովանդակային համապատասխանեցում սովորողների տարիքային առանձնահատկություններին՝ բեռնաթափելով ավելորդ գիտականացումից, սանիտարահիգիենիկ պահանջների վերանայում,

բ. հայալեզու, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների լեզուներով տպագիր և էլեկտրոնային ուսումնական պաշարների բանկի հարստացում, նկատի ունենալով նաև սփյուռքահայ կրթօջախների կարիքներին համապատասխան,

գ. հանրակրթական ուսումնական հաստատություններում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառության ընդլայնում, համակարգչային սարքավորումների վերազինման արդյունավետ համակարգի ներդրում,

դ. տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների կրթական ծրագրերի բարելավում, առկա լավագույն փորձի ընդլայնում և զարգացում:

11. Որակի ապահովման կարևոր բաղադրիչ է գնահատման համակարգը, որը պետք է ներառի ինչպես հստակ սահմանված վերջնարդյունքների, այնպես էլ ուսումնառության միջավայրի և գործընթացի գնահատումը:

12. Հանրակրթության որակի բարելավման քաղաքականությունը պետք է զուգորդվի կրթական ծառայությունների մատչելիության բարձրացման և կրթության մեջ առավելագույն ընդգրկվածության ապահովման ծրագրերով: Պետք է մեղմացվեն և վերացվեն սոցիալական, տնտեսական և մշակութային գործոնները, որոնք դեռևս խոչընդոտում են որակյալ կրթություն ստանալու հավասար հնարավորությունների ապահովմանը:

13. Հանրակրթության մատչելիության բարձրացման և կրթության մեջ առավելագույն ընդգրկվածությունն ապահովելու գործողությունների շրջանակն է.

1) պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկերի կանխարգելման, դուրս մնացած երեխաների հայտնաբերման և նրանց ուսուցման համակարգ վերադարձման մեխանիզմների գործարկումը,

2) ավագ դպրոցի հանրակրթական և նախնական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների տեղաբաշխման

սկզբունքների մշակում, և դրանց համապատասխան հաստատությունների ցանցի զարգացում՝ ապահովելով մատչելիությունը և տարածքային զարգացման ծրագրերով սահմանված առաջնահերթությունները,

3) սոցիալապես անապահով խավերին պետական աջակցության ծավալների աստիճանական մեծացում և հասցեականության բարձրացում,

4) հեռավար կրթական ծառայությունների, էլեկտրոնային բաց պաշարների, առցանց դասընթացների ներդրում, այդ թվում՝ գյուղական և սահմանամերձ համայնքների համար,

5) փոքրաթիվ աշակերտական համակազմ ունեցող գյուղական դպրոցների կրթության կազմակերպման ծախսարդյունավետ ձևերի ներդրում,

6) ավագ դպրոցներին տրանսպորտային հնարավորություններով ապահովում:

14. **Թիրախ 2.** Կրթության բոլոր մակարդակներում ամրապնդել դաստիարակության բաղադրիչը: Պետականության դերի գիտակցման, հայրենասիրական, քաղաքացիական և էկոլոգիական ուսուցման և դաստիարակության միջոցներով բոլոր սովորողներին զինել հասարակության կայուն զարգացմանը նպաստող գիտելիքներով և կարողություններով:

15. Կրթությունը կարևոր դերակատարում ունի քաղաքական, տնտեսական, սոցիալական և էկոլոգիական բազմաթիվ խնդիրների առջև կանգնած Երկրի կայուն զարգացող և բարեկեցիկ հասարակության կայացման գործում: Նման կրթությունն իր բովանդակությամբ և ձևերով պետք է համապատասխանի առկա խնդիրներին, ապահովի համապատասխան գիտելիքների, կարողությունների, արժեքների և վերաբերմունքի ձևավորմանը, դաստիարակի հասարակության ակտիվ և պատասխանատու քաղաքացի, որն ունակ է վարել արդյունավետ կյանք, դրսևորել առողջ ապրելակերպ, պաշտպանել սեփական և հարգել ուրիշների իրավունքները, արժևորել սեփական ինքնությունը և առաջնորդվել հանդուրժողականության սկզբունքներով, պաշտպանել ազգային շահը, կայացնել գիտակցված որոշումներ, նպաստել խաղաղությանը և պատրաստ լինել ծառայելու ազգային և համամարդկային խնդիրների լուծմանը:

16. Նման խնդիրների լուծումը չի կարող սահմանափակվել միայն պետական ուսումնական ծրագրերով սահմանված կրթության շրջանակներում: Լիարժեք արդյունքի հասնել կարելի է օգտագործելով նաև ոչ ֆորմալ և ինֆորմալ

կրթության ռեսուրսները, միաժամանակ, կրթության համակարգում որդեգրելով ժողովրդավարական սկզբունքներ՝ թե կառավարման, թե կրթական գործընթացի կազմակերպման առումով: Հետևաբար, կարևոր է մարդու իրավունքների կրթության բաղադրիչի ներառումը և այդ համատեքստում ցեղասպանությունների՝ որպես մարդկության դեմ գործած հանցագործության մասին պատմական փաստերի վերաբերյալ գիտելիքների փոխանցումը:

17. Թիրախին հասնելու գերակա խնդիր է դաստիարակության բազմաչափ և գործուն համակարգի ներդրումը, որը ընդգրկում է գործողությունների հետևյալ շրջանակը՝

- 1) դաստիարակության հայեցակարգի և ռազմավարության մշակում,
- 2) օրենսդրության կատարելագործում՝ ուսումնադաստիարակչական աշխատանքները խթանելու նպատակով,
- 3) ուսումնադաստիարակչական աշխատանքների մեթոդական և ծրագրային բովանդակության արդիականացում,
- 4) հայրենասիրական, քաղաքացիական, բնապահպանական, գեղագիտական, առողջ ապրելակերպի, տնտեսվարության, ինչպես նաև մարդու իրավունքների և ժողովրդավարության ուսումնադաստիարակչական ծրագրերի և միջոցառումների իրականացում կրթական բոլոր մակարդակներում՝ ներգրավելով պետական, մարզային, հասարակական և միջազգային կազմակերպությունների ներուժը,
- 5) արտադպրոցական և համայնքային կրթական-բնապահպանական ծրագրերի իրականացման մեխանիզմի ներդրում,
- 6) աղետների ռիսկերի նվազեցման և դիմակայնության կրթության ծրագրերի զարգացում, համապատասխան ուսումնական, ուսումնադիտողական նյութերի, ուսումնամեթոդական ձեռնարկների մշակում և կիրառում,
- 7) արտադպրոցական կրթության և դաստիարակության ոլորտի կադրերի վերապատրաստում (մանկավարժական, վարչական անձնակազմ),
- 8) արտադպրոցական կրթության և դաստիարակության բնագավառի միջազգային չափանիշներին համապատասխանություն և միջազգային զարգացումներին ինտեգրում,

9) ամառային ճամբարներում ուսումնադաստիարակչական նոր ծրագրերի ներդրում,

10) դպրոցում ֆիզիկական կուլտուրայի զարգացմանն ուղղված ծրագրերի ներդրում, այդ թվում հաշմանդամություն ունեցող երեխաների համար,

11) հասարակության զարգացմանը և կրթության բնագավառում կատարվող բարեփոխումներին համահունչ կատարելագործել նախնական զինվորական պատրաստության և հայրենասիրական դաստիարակության բնագավառի օրենսդրությունը՝ գործող իրավական ակտերում կատարելով համապատասխան փոփոխություններ և մշակելով նոր իրավական ակտեր,

12) ուսումնական հաստատությունները ապահովել նախնական զինվորական պատրաստություն առարկայի դասավանդման և ռազմահայրենասիրական դաստիարակության վերաբերյալ ուսումնադիտողական նյութերով, ուսումնամեթոդական ձեռնարկներով,

13) ուսումնական, ուսումնադիտողական նյութերի և ուսումնամեթոդական ձեռնարկների արդիականացում ու թարմացում:

18. **Թիրախ 3.** Մինչև 2025 թվականը բարելավել 3-6 տարեկան բոլոր երեխաների համար հավասար հասանելի և որակյալ նախադպրոցական կրթության մատչելիություն ու ապահովել 5 տարեկանների առավել ընդգրկվածություն:

19. Նախադպրոցական կրթությունը հանդիսանում է տեղական ինքնակառավարման մարմինների պատասխանատվությունը և հիմնականում ֆինանսավորվում է տեղական բյուջեներից: Այնուամենայնիվ, թե երեխայի համակողմանի զարգացման, թե դպրոցին պատրաստված լինելու և հավասար մեկնարկային հնարավորությունից օգտվելու տեսանկյունից, այն կարևոր նշանակություն ունի: Այս առումով պետական քաղաքականությունն ուղղված է խթանելու նախադպրոցական կրթության զարգացումը, օժանդակելու համայնքներին՝ համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի:

20. Նախադպրոցական կրթության զարգացման հիմնական գերակայությունն է նախադպրոցական կրթության մատչելիության և հասանելիության ապահովումը: Այն ներառում է գործողությունների հետևյալ շրջանակը՝

1) նախադպրոցական կրթության կազմակերպման ձևերի բազմազանացում,

2) նախադպրոցական ծառայությունների ընդլայնում՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով գյուղական և սահմանամերձ համայնքներին,

3) նախադպրոցական այլընտրանքային, ծախսարդյունավետ մոդելների ներդրում,

4) կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ներառման համար համապատասխան պայմանների ստեղծում:

21. Միաժամանակ, նախադպրոցական կրթության զարգացման քաղաքականություններն ուղղված կլինեն կրթության որակի բարձրացմանը, մասնավորապես՝

1) նախադպրոցական ուսումնական հաստատությունների ուսումնանյութական բազայի, նյութատեխնիկական հագեցվածության բարելավում,

2) կադրերի շարունակական վերապատրաստման մեխանիզմների մշակում,

3) նախադպրոցական ծառայությունների ֆինանսավորման արդյունավետ մեխանիզմների ներդրում,

4) նախադպրոցական հաստատությունների շենքերի անվտանգության գնահատման մեխանիզմի ներդրում:

22. **Թիրախ 4.** Մինչև 2025 թվականը զգալիորեն ավելացնել մասնագիտական անհրաժեշտ պատրաստվածություն ունեցող երիտասարդների և մեծահասակների թիվը՝ վերջիններիս համար արժանապատիվ աշխատանք գտնելու, գործազրկությունը նվազեցնելու և գործարարությունը խթանելու նպատակով:

23. Նկատի ունենալով մարդկային ռեսուրսների հույժ կարևորությունը երկրի երկարատև սոցիալ-տնտեսական զարգացման գործում, մասնագիտական կրթությունը ծրագրային ժամանակահատվածում պետք է լինի ոլորտի հաջորդ գերակայությունը: Մասնագիտական կրթության զարգացման ծրագրային հիմնական ուղղությունները համապատասխանում են Բոլոնիայի և Թուրինի գործընթացներին:

24. Մասնագիտական կրթությունը ներառում է հետևյալ գերակայությունները և գործողությունների շրջանակը.

1) Մասնագիտական կրթության համակարգի և ուսումնական հաստատությունների արդյունավետության բարձրացում: Գործողությունների շրջանակը ներառում է.

ա. բարձրագույն ուսումնական հաստատությունների տեսակների հստակեցում, կարգավիճակների բազմազանեցում ըստ կրթական ծրագրերի աստիճանի, համալսարանների՝ որպես ինստիտուտների միավորումներ, ձևավորում,

բ. ցանցային կրթական համակարգերի ներդրում և համագործակցային միջավայրի ձևավորում,

գ. բուհերի ներքին արդյունավետության բարձրացում՝ մասնագիտությունների խոշորացման, ուսանող/դասախոս, ուսանող/ոչ դասավանդող անձնակազմ հարաբերակցության բարձրացման միջոցով,

դ. ուսումնական հաստատությունների կառավարման մարմինների ձևավորման սկզբունքների, քանակական կազմի, ներակայացչականության չափանիշների, իրավասությունների և գործառույթների վերանայում՝ դրանց բուհերի զարգացման հարցերին գործուն մասնակցությունն ապահովելու և բուհի ինքնավարությունը խթանելու նպատակով,

ե. բարձրագույն կրթության ոլորտին հատկացվող պետական ֆինանսավորման և մասնավոր ներդրումների (ոչ վարձավճարների) աստիճանական ավելացում, ինչպես նաև պետական ֆինանսավորման ձևերի փոփոխություն՝ աստիճանական անցում կատարելով կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման մեթոդին,

զ. ֆինանսավորման այնպիսի մեխանիզմների ներդրում, որոնք կխթանեն և կշահագրգռեն բարձրագույն ուսումնական հաստատություններին՝ ներգրավելու արտաբյուջետային միջոցներ, բուհի ֆինանսական կառավարմանը ներգրավելու ինստիտուտները, ֆակուլտետները և ամբիոնները,

է. բուհերի ինքնավարության և հաշվետվողականության հավասարակշռված համակարգի ստեղծում, բուհի կառավարման գործառույթների բարելավում,

ը. մասնագիտական կրթության օրենսդրության կատարելագործում, մասնավորապես՝ բարձրագույն կրթության մասին նոր օրենքի ընդունում և դրան համապատասխան ենթաօրենսդրական ակտերի վերանայում,

թ. բարեվարքության սկզբունքների և վարքականոնի սահմանում, դրանց կիրառում, վերահսկման ու կոռուպցիոն ռիսկերի կանխարգելման մեխանիզմի մշակում ու կիրարկում,

ժ. մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգերի ծրագրային ընդլայնում և կատարելագործում:

2) Բնակչության բոլոր խավերի համար միջին և բարձրագույն մասնագիտական կրթության մատչելիության բարձրացում: Գործողությունների շրջանակը ներառում է.

ա. միասնական քննությունների և բուհերի ընդունելության մրցույթների հայեցակարգի վերանայում, որդեգրելով բարձրագույն կրթության միասնական ընդհանուր մրցույթների թույլտվության չափանիշներ՝ մեծացնելով բուհերի լիազորությունները մրցույթներում,

բ. պետական բյուջեից հատկացվող նպաստների և կրթաթոշակների հասցեականության ապահովում՝ տարանջատելով նաև պետական նպաստ ստացողներին և կրթաթոշակ ստացողներին ու նպաստների հատկացում՝ առաջադիմության և կարիքավորության համակցման սկզբունքով,

գ. պահպանելով կրթաթոշակային ծրագիրը, վերջինիս ուղղորդում բացառապես կարիքավոր ուսանողներին՝ նրանց ովքեր ի վիճակի չեն վճարել ուսման վարձերը: Կրթաթոշակի չափի հավասարեցում ուսման վարձավճարի չափին,

դ. բուհերի կողմից ուսման վարձերի որոշման քաղաքականության ներդրում՝ կիրառելով ուսման վարձերի հաշվարկման հիմնավորված և արդարացի մեթոդաբանություն,

ե. կրթության կազմակերպման հեռավար, ցանցային, կրեդիտների կուտակման հնարավորությունների բազմազանեցում, ինչպես նաև մասնագիտական շարունակական կրթության մեխանիզմների կատարելագործում,

զ. հանրակացարանային կարողությունների բարելավման և օտար լեզվով ուսուցման խթանում, որի արդյունքում կավելանա Հայաստանում օտարերկրացի սովորողների թիվը:

3) Մասնագիտական կրթության որակի բարձրացում և դրա համապատասխանեցում աշխատաշուկայի պահանջներին, շրջանավարտների զբաղվածունակության խթանում: Գործողությունների շրջանակը ներառում է.

ա. ՀՀ որակավորումների ազգային շրջանակի հետագա կատարելագործում ու ներդրում առանձին բուհերի, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների և մասնագիտությունների մակարդակով՝ ապահովելով որակավորումների համադրելիությունը եվրոպական որակավորումների համապարփակ շրջանակի հետ և համապատասխանությունը աշխատաշուկայի պահանջներին,

բ. մասնագիտական կրթության բոլոր աստիճաններում որակավորումների ազգային շրջանակին համապատասխան ծրագրային բարեփոխումների իրականացում: Մասնավորապես, կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխում՝ ուղղորդելով դրանք դեպի ուսումնառության վերջնարդյունքները, ինչպես նաև շրջանավարտների զբաղվածունակության բարձրացմանը և մասնագիտական կոմպետենցիաների համապատասխանեցմանը աշխատուժի շուկայի արդի պահանջներին,

գ. նորաստեղծ կրթական ծրագրերի համապատասխանեցում նաև սովորողների պահանջմունքներին՝ ճկուն մոդուլային կառուցվածքների և կամընտրական դասընթացների ներմուծման, անհատականացված ուսումնական գրաֆիկների և դասավանդման ուսանողակենտրոն մեթոդների կիրառման միջոցով: Կրթական ծրագրերի ճկուն մոդուլային կառուցվածքի ներմուծմանը զուգահեռ ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման գործընթացների կատարելագործում,

դ. բուհերի կարիերայի կենտրոնների և աշխատատեղերի որոնման աջակցության ծառայությունների զարգացում: Բուհերի կարիերայի կենտրոնների սերտ համագործակցում գործատուների հետ,

ե. բուհերի գիտահետազոտական գործունեության ընդլայնում, գիտահետազոտական ինստիտուտների և բուհերի համագործակցության ամրապնդում: Բուհի ուսանողների և դասախոսների ներգրավում գիտահետազոտական ինստիտուտների կողմից կատարվող գիտահետազոտական աշխատանքներում, գիտահետազոտական ինստիտուտների գիտաշխատողների ներգրավում բուհի կրթական գործընթացում որպես դասախոսներ կամ ատենախոսությունների գիտական ղեկավարներ՝ համադրելով արդյունքները,

գ. սովորողների և պրոֆեսորադասախոսական կազմի շարժունության ու բուհերի միջազգայնացման ընդլայնում,

է. բուհերի լիցենզավորման և հավատարմագրման գործընթացների կատարելագործում՝ խստացնելով դրանց պայմանները,

ը. բուհերի որակի արտաքին գնահատման և որակի ապահովման ներբուհական գործընթացների զարգացում ու համակողմանի գործարկում՝ «Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի որակի ապահովման չափանիշներին և ուղեցույցներին» համապատասխան,

թ. ՀՀ բուհերի պետական և միջազգային ինստիտուցիոնալ ու ծրագրային հավատարմագրում: Պետական հավատարմագրում չանցած բուհերի լիցենզիայի վերանայում,

ժ. նորարարական մրցակցային ծրագրերի խթանում և ընդլայնում,

ժա. ՀՀ մասնագիտական կրթության որակի ապահովման համակարգի ինտեգրում բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական և միջազգային համակարգերին,

ժբ. նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների դասավանդողների և ուսուցման վարպետների մասնագիտական կարողությունների հզորացում: Արտադրություններում աշխատող մասնագետների ուսումնական հաստատություններ մուտքի խրախուսում և բոլոր դասախոսների համար համապատասխան կազմակերպություններում մասնագիտական վերապատրաստումների կազմակերպում,

ժգ. մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) համակարգում գործատուների ներգրավում ուսումնական գործընթացում, սոցիալական գործընկերության ամրապնդում և նոր որակի հաղորդում,

ժդ. ՄԿՈՒ հաստատությունների շենքային և նյութատեխնիկական հագեցվածության շարունակական բարելավում,

ժե. ՄԿՈՒ հաստատությունների ներքին որակի ապահովման համակարգերի ստեղծում՝ եվրոպական չափանիշներին համապատասխան,

ժզ. ձեռներեցության կրթության իրականացում նախնական և միջին մասնագիտական կրթության ուսումնական հաստատություններում,

ժէ. նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ձեռնարկատիրական գործունեության հնարավորությունների և ձևերի ընդլայնում՝ ստեղծելով համապատասխան մեխանիզմներ, հիմնավոր և բարենպաստ նախապայմաններ,

ժը. մասնագիտական կրթության համակարգում աշխատանքի վրա հիմնված կրթական համակարգի տարրերի կիրառման հնարավորությունների ընդլայնում, ինչը թույլ կտա գործատուներին ներգրավված լինել կրթական գործընթացներում, ուսումնական հաստատությունների հետ համատեղ մասնակցել ինովացիոն նախագծերին և բարելավել սեփական տեխնոլոգիաներն ու արտադրանքը:

25. **Թիրախ 5.** Մինչև 2025 թվականը ապահովել բոլոր խոցելի խմբերի՝ այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց հավասար մասնակցության հնարավորությունը կրթության բոլոր մակարդակներում:

26. Կրթության բոլոր մակարդակներում անհրաժեշտ է ստեղծել որակյալ կրթություն ստանալու հավասար հնարավորություններ բոլորի համար, ներառյալ՝ խոցելի խմբերի, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, կյանքի դժվարին պայմաններում հայտնված աղջիկների և տղաների, կանանց և տղամարդկանց: Կրթության ոլորտում իրականացվող բոլոր ծրագրերը, բարեփոխումները, նախաձեռնություններն ու մշակումները պետք է հաշվի առնեն սովորողների առանձին խմբերի և անհատների կարիքները, նախատեսեն դրանց արձագանքման համապատասխան մոտեցումներ:

27. Պետական քաղաքականության առաջնահերթ խնդիրն է անցնել համընդհանուր ներառական հանրակրթության՝ ներառյալ նախադպրոցական կրթությունը: Այն ընդգրկում է գործողությունների հետևյալ շրջանակը.

1) հանրակրթական ծրագրերի, կրթության կազմակերպման ձևերի վերանայում՝ ներառականության սկզբունքներին համապատասխան,

2) հանրակրթական դպրոցների կադրային և նյութական կարողությունների հզորացում՝ սովորողների տարաբնույթ կարիքներին արձագանքելու համար,

3) դպրոցներում հատուկ կրթական կարիքներ ունեցող սովորողների համար մատչելի ֆիզիկական և բարոյահոգեբանական միջավայրի ստեղծում,

4) հատուկ դպրոցների վերակազմակերպում մանկավարժահոգեբանական

աջակցության կենտրոնների,

5) սովորողների կրթական կարիքների բացահայտման և գնահատման մեխանիզմների կատարելագործում, ներառյալ Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից մշակված ֆունկցիաների միջազգային դասակարգչի մեթոդաբանության հիման վրա մշակված գնահատման գործիքների կիրառումը:

28. Միաժամանակ կընդլայնվեն մասնագիտական կրթության ներառական կարողությունները, կներդրվեն ներառական մասնագիտական կրթական ծրագրեր, օժանդակություն կցուցաբերվի ներառականությանը նպաստող ոչ ֆորմալ կրթական ծրագրերին, աստիճանաբար կվերացվեն խոցելի խմբերի որակյալ կրթություն ստանալու ծրագրային, կազմակերպական, նախապաշարումային խոչընդոտները:

29. Քայլեր կձեռնարկվեն հասարակության մեջ հաշմանդամություն ունեցող երեխաների և մեծահասակների նկատմամբ դեռևս գոյություն ունեցող սահմանափակ կարծրատիպերի հաղթահարման ուղղությամբ:

VI. ԿՐԹՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ,

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

30. Ծրագրի իրականացման պատասխանատուն և համակարգողը կրթության պետական կառավարման լիազորված մարմինն է:

31. Ծրագիրն իրականացվում է առանձին նպատակային ծրագրերի միջոցով: Նպատակային ծրագրերի մշակումը և իրականացումը կկատարվեն պետական, միջազգային և հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ: Նպատակային ծրագրերի ցանկում կընդգրկվեն նաև միջազգային և հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերը, որոնք համահունչ են Ծրագրի ռազմավարությանը և ուղղված են սահմանված նպատակների իրականացմանը:

32. Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը երկու տարին մեկ անգամ հրապարակում է Ծրագրի առաջընթացի հաշվետվությունը, որը քննարկվում է կրթության հանրապետական համաժողովում:

33. Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը ապահովում է Ծրագրի մոնիթորինգի մասնակցային և թափանցիկ գործընթաց:
34. Բոլոր մակարդակներում էլեկտրոնային համակարգերի կիրառմամբ տվյալների հավաքման և վերլուծության բարելավման միջոցով կբարձրացվի համակարգի հաշվետվողականությունը և թափանցիկությունը:
35. Կվարվի միջազգային պահանջներին համապատասխան վիճակագրական տվյալների հավաքագրում և վերլուծություն: